ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
"MKHITAR SEBASTATSI" EDUCATIONAL COMPLEX
MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA
0064,Երևան.Ա.Բաբաջանյան 25 հեռ:74 11 12. 091 43 10 99. info@mskh.am www.mskh.am
25 A. Babadjanyan str., Yerevan, tel: (374 10) 74 11 12, (374 91) 43 10 99

13-04-148 **06.04.2013թ.**

ԼՂՀ ՇՈՒՇԻԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԹԻՎ 2 ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ՏԻԿԻՆ Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Նալբանդյան.

Կրթահամալիրի սովորողներին և աշխատողներին ոգևորում է հայաստանցիների և արցախցիների, մասնավորապես շուշեցիների համար առանձնահատուկ ամիս մայիսը միասին տոնելու հեռանկարը: ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավիկ Ասրյանի, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար տիկին Նարինե Աղաբալյանի, Շուշիի վարչական շրջանի ղեկավարության, Ձեզ հետ մեր հանդիպումների ժամանակ որոշակիացվեցին մեր մասնակցության ձևերը:

- Շուշիում մայիսի 3-ին կրթահամալիրի միջին դպրոցի ֆուտբոլի ակումբը կմասնակցի ֆուտբոլի դաշտի բացմանը, իսկ միջին դպրոցի մեդիալրագրության խումբը կլուսաբանի Շուշիի մասնավոր ցուցասրահի բացումը:
- Մայիսի 9-ին կրթահամալիրի արհեստագործական ավագ դպրոցը կմասնակցի Արցախի կերպարվեստի պետական թանգարանի բացմանը, հանդես կգա կիրառական արհեստների ուսուցման հրապարակային ցուցադրությամբ, իր կոնկրետ աջակցությունը կբերի Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան հիմնական դպրոցին և Ասքերանի վարպետաց դպրոցին:
- Մայիսի 26-28-ին կիրականացվի Հանրապետության օրվան նվիրված «Մշակութային Շուշի» նախագիծը, որն ուզում ենք դարձնել ավանդական: Նախագծի շրջանակում Գեղարվեստի ավագ դպրոցի սովորողները և արվեստագետները կիրականացնեն քաղաքային պլեներ, կներկայացնեն Շուշին՝ որպես հայոց մշակութային մայրաքաղաք, Շուշին համացանցում և տպագիր ռեսուրսներում, շուշեցի գործիչներին, Շուշիի կրթական

հաստատությունները, Շուշիի այս օրը, խնդիրները, դրանց լուծմանն ուղղված ուսումնական նախագծեր: Այդ օրերին կրթահամալիրի «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախումբը, Գեղարվեստի ավագ դպրոցի կինո-թատրոնի խումբը հանդես կգան համերգային ծրագրով Շուշիում, Ստեփանակերտում և Գանձասարում:

Մեզ ոգևորեց Շուշիի վարչական շրջանի ղեկավարության հավաստումը՝ Շուշիի ավետարանչական եկեղեցու ճամբարը որպես կացարան տրամադրելու մասին: Մնացած ծախսերը կհոգան «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամը և կրթահամալիրը:

Օգտվելով առիթից՝ հաստատում ենք, որ Դուք Երևանում, ի դեմս կրթահամալիրի, ունեք հուսալի գործընկեր և հյուրընկալ օջախ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ ***ԱՇՈՏ ԲԼԵՅԱՆ***

info@mskh.am